

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԻ. ՏԱՐԻ 2006

ՀՐԱՏ, ԼՈՒՍԱԲԵՐ, ՓԱՅԼԱԾՈՒ, ԵՐԵՒԱԿ, ԼՈՒՍՆԹԱԳ

Գոհար Սուրադեան

«Պատճեն տոմարի» աշխատութեան մէջ, որի հեղինակն, ամենայն հաւանակաւնութեամբ, Անանիա Շիրակացին է, իսկ մեզ այն հասել է 11-րդ դարի գիտնական Յովհաննէս Սարկաւազի խմբագրութեամբ եւ լրացումներով, յիշատակուած են լուսատուներն ու հինգ մոլորակները. Հրատ, Արեգակն, Լուսաբեր, Փայլածու, Լուսին, Երեւակ, Լուսնթագ¹, ինչպէս նաեւ հետեւեալ խորհրդաւոր շարքը՝ Հրատ՝ Ա Աոոս, Արեգակն՝ Բ Նիդոս, Գ Լուսաբեր՝ Դ Եփրոդիտէ, Փայլածու՝ Զ Եոմիս, Լուսին՝ Ե Սեղիմոս, Երեւակ՝ Ը Կոռնոս, Լուսնթագ՝ Է Նեւս²: Անանիա

Շիրակացու այլ աստղագիտական երկերում եւս հանդիպում են Երեւակ, Հրատ (նաեւ՝ Խրատ տարբերակով), Լուսաբեր, Փայլածու, Լուսնթագ³:

րում այդ անունները թէականօրէն վերագրուած են այս կամ այն մոլորակին. տե՛ս համապատասխան բառայօդումները: Ղ. Ալիշանը (Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վեներիկ, 1895, էջ 109) գշում է. «հին եւ նոր ազգային կոչմամբ դիտելի է այս երկանունութիւնը՝ Լուծ – Փայլածու, Եղջերու – Արուսեակ, Ծկրատրի – Հրատ, Արտախոյր – Լուսնթագ, Փեռագնոտի – Երեւակ», եւ աւելացնում. «որիչ հին անուանք էլ կան, բայց ո՞րն որին համեմատելի՞ն՝ անտարակոյս չէ», իսկ 110-111 էջերում բերում է այդ հին անունների վկայութիւնները եւ մեկնաբանում դրանք: Ալիշանը (էջ 109) մէջբերում է նաեւ Վարդան Արեւելցու «Մեկնութեան» մէջ ընդգրկուած՝ Եղիշէի «Ծանոց մեկնութիւնից». «ի վեր քան գեօթն մոլորակս՝ եօթն այլ աստղ կայ նշանտորք... եւ են ի մէջ մոլորիցն եւ անմոլարիցն»: Ներկայումս Եղիշէի երկը հրատարակուած է, եւ համապատասխան հատուածը հետեւեալ տեսքն ունի. «ի վեր քան զ՛ մոլորակսն այլ նման նոցին է՛ աստեղք են սաստիկ ցուրտ բնութեամբ, որ գերկնի գրորքքեալ ջերմութիւնն ցրտացուցեալ եւ բարեխառնեալ՝ տ[ա]ն[ե]ն ապա ի վայր, յէ՛ մոլորակսն: Եւ ասեն անմոլար գունը», տե՛ս «Մեկնութիւն արարածոց գրոց Եղիշէի վարդապետի», Մատենագիրք հայոց, Ա հտ., Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 776:

1 Պատճեն տոմարի (Է-ԺԵ դդ.), քննութիւն եւ բնագրեր, աշխատասիրութեամբ Զ. Էյնաթեանի, Երեւան, 2002, էջ 144, նաեւ Հին հայկական տոմարը, երկլեզու գրաբար-անգլերէն հրատարակութիւն, բնագիրը հրատարակութեան պատրաստեց Զ. Էյնաթեանը, անգլերէն թարգմանութիւնը՝ Գ. Մուրադեանի եւ Ա. Թոփչեանի, Երեւան, 2002, էջ 40:

2 Հին հայկական տոմարը, էջ 48, Պատճեն տոմարի, էջ 147, տե՛ս նաեւ Հին հայկական տոմարը, էջ 114 (ծ. 29, էջ 248), Պատճեն տոմարի, էջ 173 (եւ ծ. 17, էջ 476). Աոոս, Նիդոս, Ափրոդիտէ, Եոմիս, Սիդիմոս, Կոռնոս, Նիւ: Նոյն ցուցակում առկայ Լուծ, Եղջերու, Ծկրատրի, Փարագնոտի, Արտախոյր անունները, հրատարակիչ Զ. Էյնաթեանի բնորոշմամբ, «հինգ մոլորակների հնագոյն անուանումներն» են: Տե՛ս նաեւ՝ Հին հայկական տոմարը, էջ 138, 144, Պատճեն տոմարի, էջ 180, 182: Հայկազեան եւ Առձեռն ուսարանէ-

3 Ա. Աբրահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 315-316 («Վասն

Հին յոյները (ինչպէս եւ նրանցից առաջ՝ եգիպտացիները) ճանաչում էին Հինգ տեսանելի «թափառող աստղեր» (πλανήτες ἀστέρες) կամ «մոլորակներ»՝ ի տարբերութիւն անշարժ «անմոլար» (ἀπλανείς) աստղերի: Երբեմն զրանց աւելացնում էին արեգակն ու լուսինը եւ խօսում եօթ մոլորակների մասին: Մ. թ. ա. 5-4-րդ դարերում հաստատուել էին մոլորակների հետեւեալ անուանումները՝ «Կրոնոսի աստղ» (ὁ ἀστὴρ τοῦ Κρόνου), այսինքն՝ Սատուրն, «Զեւսի աստղ» (ὁ ἀστὴρ τοῦ Διός)՝ Եուպիտեր, «Արէսի աստղ» (ὁ ἀστὴρ τοῦ Ἄρεως)՝ Մարս, «Ափրոդիտէի աստղ» (ὁ ἀστὴρ τῆς Ἀφροδίτης)՝ Վեներա, «Հերմէսի աստղ» (ὁ ἀστὴρ τοῦ Ἑρμοῦ)՝ Մերկուրի: Բայց մոլորակներն ունէին եւ այլ անուանումներ՝ մակըիրներ, որոնք նրանց արտաքին յատկանիշների, փայլի բնորոշումներն էին: Հոմերոսն առաջինն է, որ յիշատակում է Վեներան որպէս «երեկոյան աստղ» (ἔσπερος, *Il.* 22. 318, *Od.* 1.422-3, 4.786, 8.305-6) եւ «առաւօտեան աստղ» (ἑωσφόρος, *Il.* 22.226, բառացի՝ «առաւօտ բերող»): Մ. թ. ա. 4-րդ դարի նշանաւոր աստղագէտ Եւդոքսոս Կնիդացու մօտ վկայուած են Հինգ մոլորակների մակըիրները՝ Ἑωσφόρος, Στίλβων, Φάλων, Φαέθων ὁ τοῦ

Διός ἀστὴρ, Πυροειδής⁴ ձեւով: Իսկ մ. թ. ա. 3-րդ դարի առաջին կէսին այդ մակըիրները՝ որոշ փոփոխութեամբ, հետեւեալ տեսքն ունէին՝ Φάλων («յայտնող»՝ փալնա բայի ներգործական սեռի ներկայ դերբայի արական սեռի ուղղական հոլովն է), Φαέθων («չողացող»՝ փաէթա պակասաւոր բայի ներգործական սեռի ներկայ դերբայի արական սեռի ուղղական հոլովն է⁵), Πυρόεις կամ Πυροειδής («հրային»՝ երկուսն էլ ածականներ են πῦρ – «կրակ» բառից), Φωσφόρος (բարդ բառ է՝ «լոյս բերող», փոխարինել է վերոյիշեալ Ἑωσφόρος «առաւօտ բերող» մակըիրին), Στίλβων («փայլող»՝ στίλβω բայի ներգործական սեռի ներկայ դերբայի արական սեռի ուղղական հոլովն է): Այս շարքի հնագոյն ամբողջական վկայութիւնն է համարւում Թէոն Զմիւռնիացու (մօտ 70-135 թթ.) հետեւեալ հատուածը, որում մակըիրները զուգադրուած են աստղածների անունների հետ. ἥλιος τε... καὶ ἡ σελήνη καὶ οἱ λοιποὶ πλανήτες, Φάλων τε ὁ τοῦ Κρόνου προσαγορευόμενος, ὡς δέ τινες Ἴηλου, καὶ Φαέθων ὁ τοῦ Διός, ἔτι δὲ Πυροίεις, ὃν Ἄρεως καλοῦσιν, οἱ δὲ Ἡρακλέους, καὶ Φωσφόρος, ὃν φασιν Ἀφροδίτης, τοῦτον δὲ καὶ Ἑωσφόρον καὶ Ἑσπερον ὀνομάζουσι, πρὸς δὲ τούτοις Στίλβων, ὃν καλοῦσιν Ἑρμοῦ – «Արեգակն ու Լուսինը եւ մնացած մոլորակները՝ Փայնոնը (Երեւակը), որ կոչուում է Կրոնոսի [Սատուրնի] մոլորակ, իսկ ըստ այլոց՝ Հելիոսի, եւ Փայթթոնը (Լուսնթագը)՝ Զեւսի [Եուպիտերի] մոլորակ, ինչպէս նաեւ Պիւռոնը (Հրատը), որ անուանում

4 Eudoxi ars astronomica qualis in charta Aegyptiaca superest, ed. F. Blass, 1887, p. 15. դրանք են՝ Վեներան, Մերկուրին, Սատուրնը, Եուպիտերը, Մարսը:
5 «Փայթթոն» կոչուել է նաեւ արեգակը, ինչպէս նաեւ՝ Հելիոսի որդին, որը յայտնի էր իր հօր կառքն անյաջող կառավարելու մասին պատմող առասպելից:

Ընթացից արեգական): Հր. Բարթիկեանի համոզմամբ՝ նշուած գրուածքը, ինչպէս նաեւ «Վասն խառնարան աստղաց»-ը Օիրակացու գրչին չէր կարող պատկանել, տե՛ս Հր. Բարթիկեան, «Արատոս Սոյացու եւ Պօղոս Աղեքսանդրացու աստղաբաշխական երկերի հին հայերէն թարգմանութիւնը», *Բանբեր Մատենադարանի*, 12, 1977, էջ 144-147: Նաեւ եւթանց մոլորակացո, գոր հարկատրիս մոյն անուամբ յորջորջել, գոր կոչեն Յոյնը, Հայք եւ Պարս: Միաշարքաբ՝ եղէաւ, արեգակն, խորաշէտ: Երկշարքաբ՝ սեղիմաւ, լուսին, մանգ: Երեքշարքաբ՝ առէս, հրատ, մարգ: Չորեքշարքաբ՝ երմէս, փայլածու, կոն: Հինգշարքաբ՝ դաւս, լուսնթագ, տէրընը: Ուրբաբ՝ Ափրոդիտէս, լուսաբեր, անհետրա: Ծաբաբ՝ կոնոս, երեւակ, գրուան, տե՛ս Անանիա Օիրակացու մատենագրութիւնը, էջ 324-325 («Յաղագս կենդանատեսակաց»):

են Արէսի [Մարսի], իսկ ոմանք՝ Հերակլէսի մոլորակ, եւ Փոսփորոսը (Լուսաբերը), որն անուանում են Ափրոդիտէի [Վենուսի] մոլորակ, այն կոչուում է նաեւ Առաւօտեան աստղ եւ Երեկոյան աստղ, եւ զրանցից բացի՝ Ստիլբոնը (Փայլածուն), որն անուանում են Հերմէսի [Մերկուրիի] մոլորակ⁶: Ինչպէս տեսնում ենք, Եուպիտերի մոլորակը երբեմն կոչուել է նաեւ Հելիոսի, իսկ Արէսինը՝ Հերակլէսի մոլորակ: Հռոմում հանրապետական շրջանի վերջում յայտնուեցին Saturnus, Juppiter, Mars, Venus, Mercurius անուանումները, որոնք յունական պանթէոնի վերոյիշեալ դիցանունների լատիներէն «թարգմանութիւնն» են կամ աւելի շուտ՝ զրանց համարժէքները հռոմէական պանթէոնում⁷, իսկ մ. թ. 2-րդ դարի հռոմէական գրականութեան մէջ վկայուած են նաեւ մոլորակները՝ Cronos, Zeus, Ares, Aphrodite, Hermes⁸:

6 Theonis Smyraei philosophi Platonici expositio rerum mathematicarum ad legendum Platonem utilium, ed. E. Hiller, Leipzig, 1878, p. 130.
7 Մոլորակների այս անունները միջազգային են դարձել, եւ մենք էլ այժմ օգտագործում ենք դրանք՝ համարեա անփոփոխ ձեւով: Venus – Վեներա տարբերութիւնը բացատրում է ուսերեմի միջնորդութեամբ (իզական «ա» վերջաւորութիւնը կցուած է անուան Vener- հիմքին, որը հանդէս է գալիս թեք հոլովներում, ինչը սովորական է լատիներէն եւ յատկապէս յունարէն երրորդ հոլովման գոյականների ուսերեմ տառադարձումների համար. այդպէս «Հելլաս»-ը դարձել է Ἑλλάδα, «պլանէտ»-ը՝ planeta եւ այլն: Նոյն կերպ է առաջացել աստուածուհու եւ մոլորակի իտալերէն Venere անունը): Որպէս դիցուի անուան հայերէնում ընդունուած են ինչպէս «Վեներա», այնպէս էլ «Վենուս» ձեւերը:
8 RE, Bd. XX₂ (1950), Kol. 2017-2182 "Planeten" (W. Gundel, H. Gundel), Kol. 2023-2035: "III. Zahl, Namen, Geheimsamen und Symbolen der fünf Planeten": Կիկերոնը (*De natura deorum* 2.52-53) մէքերել է մոլորակների յունարէն մակըիրները՝ համարելով դրանք լատիներէն անուանումների հետ՝ "ea quae Saturni stella dicitur Φάλων que a Graecis nominatur... Iovis stella..., quae Φαέθων dicitur, ... Πυροίεις, quae stella Martis appellatur, ...

Ակնյայտ է, որ մոլորակների հայերէն անուանումները թարգմանութիւնն են վերոյիշեալ յունարէն մակըիրների: Հայ գրականութեան մէջ զրանք թափանցել են յունարան թարգմանութիւնների միջոցով:
Փիլոն Աղեքսանդրացու երկերում, որոնք այդ դպրոցի առաջին շրջանի գործ են համարւում եւ, հաւանաբար, անմիջապէս յաջորդել են ամենավաղ՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականութեան» թարգմանութեանը⁹, հայերէն համարժէքները դեռեւս չէին հաստատուել: Դրանցում կարդում ենք. ἑωσφόρον Ἀφροδίτην καὶ στίλβοντα Ἑρμοῦν (*Decal.* 54-55) – Արուսեակ՝ զԱստղիկ, եւ Փայլածող զՀերմէս – (Փիլ. Ժ բան 237), Արուսեակ... Փայլեալ... Հրատը (Փիլ. նխ. 92), Երեւելոյ, Լուսնթագի, Հրատը, Փայլողի (Փիլ. ել. 2.75): Արուսեակ անունը կիրառելիս թարգմանիչը փորձել է Հայկական համարժէք գտնել յունարէն «առաւօտեան աստղ» բառի համար. նոյն զուգահեռն աւանդուած է արդէն Աստուածաշնչում (Յոր Գ 9, ԺԱ 17, ԼԸ 12, Սաղմ. ձԹ 3, Ա Թագ. Լ 17)¹⁰: Հրատը-ը

stella Mercuri est (ea Στίλβων appellatur a Graecis), ... stella Veneris, quae Φωσφόρος Graece Lucifer Latine dicitur cum antegreditur solem, cum subsequitur autem Ἑσπερος" – այն, որ կոչուում է Սատուրնի աստղ եւ յոյներն անուանում են Փայլած [Երեւակ]... Եուպիտերի աստղ, որ կոչուում է Փայթթոն [Լուսնթագ]... Պիտոնյա [Հրատ], որ կոչուում է Մարսի աստղ... Մերկուրիի աստղ (այն յոյներն անուանում են Ստիլբոն [Փայլածու]),... Վեներայի աստղ, որ յունարէն կոչուում է Փոսփորոս [Լուսաբեր], իսկ լատիներէն՝ Լուկիֆեր, երբ անախորդում է արեւին, իսկ երբ հետեւում է՝ Երեկոյեան աստղ» (յունարէն եւ լատիներէն հատուածների թարգմանութիւնը մերն է):
9 Յ. Մանանդեան, *Յունարան դպրոցը եւ նրա գործունէութիւնը*, Վիեննա, 1928, էջ 105-115, С. С. Аревшатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ереван, 1973, сс. 186-188.
10 Վեներայի միւս՝ Ἑσπερος - «երեկոյեան աստղ» մակըիրն Աստուածաշնչում թարգմանուել է *Գիշերավար* (Յոր Թ 9, ԼԸ 32). այդ նոյն գուգահեռն ակայ է Պիտոնի «Օրէնքներում» *գիշերավար* ձեւով (Leg. 821c3 – *Պղատ. Օր.* 270. աստեղը

կան սեռի ներկայ դերբայի թարգմանութիւն, այն պէտք է որ ներգործական իմաստ ունենար: Սակայն զրաբարում գոյութիւն ունի միայն կրաւորածեւ խոնարհուող երեւիմ չէզոք սեռի բայը, որը չունի *երեւեմ գոյգ, այլ իրենից ածանցեալ պատճառական բայ՝ երեւեցուցանեմ): Հետեւաբար, երեւակ բառն աւելի շուտ ընկալուել է որպէս երեւիմ բայի իմաստից բխող «երեւացող» իմաստով: Այնուամենայնիւ, անկասկած թարգմանիչն այն ստեղծելիս նպատակ է ունեցել օժտել նոյն իմաստով, ինչ եւ յունարէն դերբայն է՝ «յայտնող» (բառացի՝ «երեւեցնող», կարծես՝ կազմուած գոյութիւն չունեցող *երեւեմ բայից)²⁰:

Հրատ՝ յունարէն Πυρόεις-ը Փիլոնի թարգմանիչը թարգմանել էր աւելի կանոնաւոր եղանակով՝ Հրատը բառով. -ատը վերջածանցը զրաբարում բազմաթիւ ածականներ ու գոյականներ է կազմել: Ինչպէս զրաբարում, այնպէս էլ արդի հայերէնում -ատ վերջածանցը, կապուած է հատուկ բայի արմատի հետ. հնչիւնափոխութեամբ այն կերտում է «որեւէ բանից զուրկ» իմաստով ածականներ՝ ձեռնատ, գունատ, գոյականներ՝ միջատ, ջոկատ, տերեւատ, «որեւէ բանից զրկել» իմաստով բայեր՝ գլխատել, ծայրատել²¹: Հրատ բառում -ատ վեր-

ջածանցն ակնյայտօրէն հատ-ից չի սերում, եւ իմաստով համեմատելի է, օրինակ, -ոտ ածանցի հետ (ջերոտ, ցաւոտ, արիւնոտ եւ այլն). այդպիսի իմաստ արձանագրուած չէ, սակայն այդ ածանցով կազմուած հեղեղատ եւ խորխորատ (արմատի կրկնութեամբ) գոյականները չեն նշանակում «հեղեղից զուրկ» կամ «խորութիւնից զուրկ», այլ, թերեւս, հակառակ իմաստն են արտայայտում: Սրանք, ինչպէս եւ Հրատ անունը, վկայում են, որ -ատ վերջածանցի ոչ բոլոր իմաստային երանգներն են հաշուի առնուած²²:

Փայլածու-ն յունարէն Στίλβων դերբայի թարգմանութիւնն է՝ փայլածեմ բայի հիմքից -ու վերջածանցով կազմուած գործող անձի անուն, մինչ Փիլոնի թարգմանիչը թարգմանել էր այն փայլածեմ բայի ենթակայական դերբայով եւ փայլեմ բայի ենթակայական ու անցեալ դերբայներով: Այն, որ -ու ածանցով գոյականները²³ (այցելու, աւելածու՝ աւել ածեմ բառակապակցութիւնից, մանկածու²⁴, հոգաբարձու, հո-

Հայոց լեզուի բառային կազմը, Երեւան, 1955, էջ 300, Ս. Էլոյեան, Ածանցները ժամանակակից հայերէնում, Երեւան, 1963, էջ 227. հետազոտողները զգուշացնում են՝ չշփոթել նշուած կարգի բայերը բազմապատկական -ատ- ածանցով բայերի հետ, ինչպէս, օրինակ, կտրատել, խածատել եւ այլն:

22 Վ. Աւետիսեանը (Վ. Աւետիսեան, «Հին հայկական աստղատմարական տերմինների կառուցումը», Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, թիւ 2, էջ 76-80) նշում է, որ աստղատմարական տերմինների թում գերակշռում են վերջածանցաւոր կազմութիւնները: Նա թուարկում է կարեւորագոյն վերջածանցներն ու դրանցով կազմուած եզրերը (էջ 78-79), սակայն ոչ Հրատ բառին, ոչ էլ -ատ ածանցին չի անդրադարձնում:

23 Դրանք կազմուել են բայական հիմքերից եւ ժամանակակից հայերէնում հիմնականում գրաբարեան ժառանգութիւն են. տե՛ս Ա. Մուրուալեան, Հայոց լեզուի բառային կազմը, էջ 375:

24 «Պիտոյից գրքի» թարգմանական հատուածներից մէկում՝ «պէտք»-ի սահմանման մէջ ստեղծուած բառ է (Գիրք պիտոյից, աշխատասիրութեամբ Գ. Մուրադեանի, Երեւան, 1993, էջ

20 Յունաբան թարգմանութիւններում գոյութիւն չունեցող բայերի հիմքերից ուրիշ գործող անձի անուններ էլ են կազմուել՝ իմաստակ (Իրեն. հերձ. 11, Փիլ. տեւ. 6) – σοφίστης (Cont. 4.1)՝ գոյութիւն չունեցող *իմաստիմ (հմմտ. σοφίζομαι «իմաստակել, խորամանկել») բայից, պարատրակ (Փիլ. տեւ. 31) – χορευτής (Cont. 88.5)՝ գոյութիւն չունեցող *պարատրեմ (հմմտ. χορεύω «շուրջպար բռնել») բայից, վերելակ (Փիլ. այլաբ. 176) – ἀναβάτης (LA 2.102)՝ ելանեմ բայի անցեալ կատարելի հիմքից՝ վեր- անխածանցով (*վերելանեմ բայ չկայ, ի տարբերութիւն ἀναβαίνω-ի), ողբերգակ – τραγικός (Թրակ. 7, Փիլ. լին. 4.211)՝ երգեմ բայի հիմքից (*ողբերգեմ բայ չկայ, τραγικός թարգմանում է երկրորդային ողբերգակեմ բայով):

21 Մ. Աբեղեան, Հայոց լեզուի տեսութիւն (Երկեր, հտ. 2), Երեւան, 1974, էջ 203, Ա. Մուրուալեան,

գաձու՝ հոգածեմ բայից, տարփածու, վերակացու) եւ ածականները (կծու, հասու, խարու, հատու) կարող են ունենալ եւ ենթակայական դերբայի իմաստ, երեւում է հետեւեալ աստուածաշնչեան օրինակից՝ γοιεύσιον ἀπειθείς – զծնաւոյս անարգութեամբ (Հռոմ. Ա 30). այն նոյնիսկ ուղիղ խնդիր է ընդունել, ինչն արտառոց է ինչպէս ածականների²⁵, այնպէս էլ ենթակայական դերբայների համար²⁶ (վերջիններիս հետ ուղիղ խնդիր էին օգտագործում յունաբան թարգմանիչները): Ի դէպ, մէջբերուած գոյականներից մի քանիսն աւարտուած են ածու բաղադրիչով, որն, անկասկած, ածեմ բայի անցեալ կատարելի հիմքն է²⁷:

Լուսաբեր-ը բարդ բառ է՝ Φώσφορος բարդ բառի ճշգրիտ թարգմանութիւն, ինչպէս Աստուածաշնչում՝ θανατηφόρος – մահաբեր (Թիւրք ԺԸ 22, Յոր ԼԳ 23, Յակ. Գ 8):

30.14), թարգմանութիւնն է յունարէն παιδαγωγός-ի. տե՛ս Ch. Walz, Rhetores Graeci, vol. 1, Stuttgartiae, 1832, pp. 55-120: Aphthonii Sophistae Progymnasmata, p. 63.7.

25 Այդպիսի խնդրատիւնն չի արձանագրում Մ. Միմասեանը. տե՛ս Մ. Միմասեան, Դասական հայերէնի ակարագրական քերականութիւն, Ժնեւ, 1996, էջ 237, 242, 247 (§ 585, 600, 615):

26 Ենթակայական դերբայի հետ այդ իմաստն է արտայայտում սեռական հոլովը. անդ, էջ 225, 234 (§0 556, 577):

27 Հմմտ. Աստ. Աստուածութեան բայից, ծաղրածու, նուագածու: -ու վերջածանցով բարդ բառերի միւս բազմաթիւ շարքերի երկրորդ անդամը արկ- եւ առ-ն է՝ արկանեմ եւ առնեմ բայերի անցեալ կատարելի հիմքերը. ահարկու, վերարկու, բանսարկու, աւանդառու, աւարառու, երախտառու, վաշխատու, վրիժառու: Սրանց հետ մէկտեղ հոգաբարձու եւ վերակացու զուգահեռներն ստիպում են ենթադրել, որ -ածու-ով բառերում նոյնպէս գործ ունենք ածեմ բայի անցեալ կատարելի, այլ ոչ ներկայի հիմքի հետ, որոնք այս բայի դէպքում համընկնում են:

Պլատոնի²⁸ «Օրէնքներում» յիշատակուած է Վենեթայի մակդիրը՝ Έωσφόρος (Leg. 821c2) – «առաւօտեան աստղ». նրա թարգմանութիւնը Լուսաբեր (Պղատ. Օր. 270) բառով, որն իրականում Φωσφόρος-ի համարժէքն է, վկայում է, որ թարգմանիչը ծանօթ էր «Յաղագս աշխարհի» երկի թարգմանութեանը²⁹:

Մոլորակների անուններ են հանդիպում 4-րդ դարի կէսերի աստղաբաշխ Պողոս Աղեքսանդրացու «Նախերգան» կոչուող գործում, իսկ դրա հայերէն թարգմանութեան մէջ, որը մինչեւ Հր. Բարթիկեանի երկնագուհեան հրատարակութիւնը համարուել է Անանիա Ծիրակացու ինքնուրոյն աշխատութիւն, դրանց համապատասխանում են վերոյիշեալ մակդիրները³⁰՝ Ἄρης (էջ 148) – Հրատ (էջ 149), Κρόνος (էջ 148) – Երեւակ (էջ 149), Ζεύς (էջ 148) – Լուսաբար (էջ 149), Ἀφροδίτη (էջ 150) – Լուսաբեր (էջ 151): Այս նոյն թարգմանութեան մէջ կան եւ այլ դէպքեր, որոնցում մոլորակների հայերէն մակդիրները զուգակցուած են յունարէն տառա-

28 Ըստ Արեւշատեանի՝ Պլատոնի երկերը յունաբան դպրոցի երրորդ խմբի թարգմանութիւններից են. տե՛ս Ս. Արեւշատեան, «Պլատոնի երկերի հայերէն թարգմանութեան ժամանակը», Բանբեր Մատենադարանի, 10, 1971, էջ 18:

29 Նոյն զուգահեռը համընկնում է Պլատոնի Տիմոստի (Պղատ. Տիմ. 102 – Tim. 38.d.2): Այս փաստը կարող ենք մի փոքր բանասիրական կողման համարել ի հաստատումն թարգմանութիւնների պայմանական ժամանակագրութեան (բաւարար թուով փաստերի բացակայութեան պատճառով՝ մասամբ մտացածին մի կառուցի):

30 Հր. Բարթիկեան, «Արատու Սուլացու եւ Պողոս Աղեքսանդրացու աստղաբաշխական երկերի հին հայերէն թարգմանութիւնը»: Ներկայացուած են զուգահեռ յունարէն եւ հայերէն տեքստերը. յունարէնը ընթերցանուած է հետեւեալ քննական հրատարակութիւնից՝ Pauli Alexandrini Elogia, ed. A. Boer, Lipsiae, 1958. Ս. Արեւշատեանն ընդգրկում է այս գրութեան յունաբան թարգմանութիւնների չորրորդ շրջանի մէջ. տե՛ս С. С. Арешатян, Формирование философской науки в древней Армении, с. 188:

դարձուած անուանների հետ՝ *Ερμού* (էջ 150, 156, սեռական հոլով) – Փայլածուին Երմու (էջ 151, 157), *Κρόνου* (էջ 150, 156, սեռական հոլով) – Երեւակի Կրոնոս (էջ 151, 157), *Αρεως* (էջ 150, սեռական հոլով) – Լուսաբերի Ափրոդիտէս (էջ 151), *Διός* (էջ 156) – Լուսնթագի Դիոս (էջ 157, Զեւս անուան սեռական հոլովն է): Յունարէն բնագրում հանդէս են գալիս բացառապէս մոլորակների «աստուածային» անուանները. մակդիրները յայտնուել են միայն հայերէն թարգմանութեան մէջ: Կարելի է ենթադրել, որ հայերէն թարգմանութիւնն արտացոլում է յունարէնի նախնական վիճակը, այսինքն՝ նշուած մակդիրները նրանում նախապէս եղել են (երկրորդ խմբի օրինակներում՝ միւս անուանների հետ զուգորդուած), իսկ հետագայում փոխարինուել են մոլորակների աւելի սովորական անուանումներով (երկրորդ խմբի օրինակներում դրանք կարող էին հանուել): Միւս հնարաւոր բացատրութիւնն է. յունարէն տեքստը պահպանուել է իր նախնական ձեւով, իսկ հայերէն թարգմանիչը «թարգմանել» է մոլորակների աստուածային անուանները դրանց հայերէն մակդիրներով:

Ի տարբերութիւն «Յաղագս աշխարհի» երկի, որտեղ *Φαέθων*-ը տառադարձուած էր, այստեղ այն թարգմանուած է Լուսնթագ: Սա մակդիրներից միակն է, որ յունարէնից բառացի չի թարգմանուած. լուսին եւ թագ բաղադրիչներ ունեցող բառի իմաստը յունարէն բառի (ձեւով ներկայ դերբայ է) «շողացող» իմաստին չի յանգում: Հայերէն այս անուանման համար բաւարար բացատրութիւն գտնելուց առայժմ ստիպուած ենք ձեռնպահ մնալ:

Ակնյայտ է, որ Պօղոս Աղեքսանդրացու «Նախբզանի» հայերէն թարգմանութիւնն աղբիւր է հանդիսացել «Պատճէն

տոմարի» երկում եւ Անանիա Շիրակացու (կամ նրան վերագրուած) միւս գրուածքներում մոլորակների անուանումների համար: Հասկանալի են դառնում եւ այդ երկից՝ վերը մէջբերուած երկրորդ շարքում տեղ գտած աղաւաղումները. Հրատ՝ Ա Արոս, Արեգակն՝ Բ Նիդոս, Գ Լուսաբեր՝ Դ Եփրոդիտէ, Փայլածո՝ Զ Եոմիս, Լուսին՝ Ե Սեդիանոս, Երեւակ՝ Ը Կոնոս, Լուսնթագ՝ Է Նեւս. նախապէս եղել է (եթէ ուշադրութիւն չդարձնենք շփոթուած թուերին)՝ Հրատ՝ Արեգակն՝ Էդիոս, Լուսաբեր՝ Ափրոդիտէ, Փայլածո՝ Եոմիս, Լուսին՝ Սեդիանէ, Երեւակ՝ Կոնոս, Լուսնթագ՝ Զեւս³¹:

Մոլորակների՝ խնդրոյ առարկայ անուաններն օգտագործել է նաեւ Յովհաննէս Երզնկացին «Յաղագս երկնային շարժմանն» երկում՝ դրանց արաբերէն (տաճիկ լեզուա) անուանների հետ զուգուհեռ³²: Հետաքրքրական է, որ արաբական անուաններն էին Երզնկացու ժամանակ սովորական, իսկ հայկական անուանները հեղինակը բերում է իր գիտելիքները ցոյց տալու նպատակով, այլեւ՝ յունարէն (հոռոմերէն) ու լատիներէն (ֆրանկերէն, դադմատերէն³³) անուանները, ինչի մասին վկայում է հետեւեալ հատուածը, որով էլ աւարտում ենք մեր համառօտ ակնարկը. Այս եօթն երկիսքս՝ եօթն Մոլորակացն տեղի են, եւ մոլորակացն այսքիկ են. Զօհրայ, Մուշարի, Մառնիս, Ծամս, Զոհրայ, Օտարիտ, Դամար... առաջին գօտին Լուսինն է, որ կոչի հոռոմերէն

31 Հետեւեալ կերպ են բացատրում ծ. 3-ում Անանիա Շիրակացուց մէջբերուած հատուածում տեղ գտած աղաւաղումները՝ *էդէաւս*-ը Հեդիոսն է, *սեդիանս*-ը՝ Սեդիանն, *դասս*-ը՝ Զեւսը:

32 Yovhannēs Erznkac‘i, *On the Movements of the Celestial Bodies*, Classical Armenian text edited by L. Step‘anyan, translated by A. T‘op‘chyan, Yerevan, 2001, p. 72.

33 Լատիներէնը դադմատերէն է կոչում Դուկասի եւ Յովհաննէսի Աւետարաններում՝ Դուկ. ԻԳ. 38. Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա, յունարէն՝ եւ դադմատերէն՝ եւ երբայցեղէն գրով, թէ՛ սա է արքայն հրէից, տե՛ս նաեւ Յովհ. ԺԹ. 20:

Սիլիանոս, ֆրանկերէն՝ Լուսայ, տաճիկերէն՝ Դամար եւ հայերէն՝ Լուսին... Երկրորդ գօտին... Փայլածուն է. հոռոմերէն Եոմիս սսի, դադմատերէն՝ Մերգուրուշ, տաճիկերէն՝ Օտարիտ... Երրորդ գօտին Լուսաբերն է, հոռոմ Ափրոդիտէս սսէ, ֆրանկերէն՝ Վէնուս վէյերուս, տաճիկերէն՝ Զոհրայ... Զորրորդն Արեգակն է. հոռոմ Եդիանոս սսէ, ֆրանկերէն՝ Սօլ, տաճիկերէն՝ Ծամս... Հինգերորդն Հրատն է, հոռոմ Արէս սսէ, ֆրանկերէն՝ Մարոշ, տաճիկերէն՝ Մառնիս... Վեցերորդն... Լուսնթագն է, հոռոմ Զեւս սսէ, ֆրանկերէն՝ Իուպիթեո, տաճիկերէն Մուշարի... Եօթներորդն... Երեւակն է, հոռոմ Կոնոս սսէ, ֆրանկերէն՝ Սաթուոնոս, տաճիկերէն՝ Զօհալ³⁴:

Յապաւումներ

Թրակ. – Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915 (*զուգահեռ յունարէն եւ հայերէն տեքստեր*)

Իրեն. հերձ. – «Իրենդեսի ընդդէմ հերձաւածոց», Irenaeus Gegen die Häretiker, von K. Ter-Mekerttschian, E. Ter-Minassiantz, Leipzig 1910

Պղատ. Տիմ. – Պղատոնի իմաստասիրի տրամախօսութիւնք. Երթիփոն, Պաշտպանութիւն Սոկրատայ եւ Տիմէոս, Վենետիկ, 1877

Պղատ. Օր. – Պղատոնի տրամախօսութիւնք յաղագս օրինաց եւ Միտոլոգիայի, Վենետիկ, 1890

Փիլ. լին., Փիլ. ել. – Փիլոնի Երբայցույ Մեկնութիւն ծննդոց եւ ելից, ճառք ի Սամիսոն, ի Յովնան, աշխատասիրութեամբ՝ Մ. Աւգերեանց, Վենետիկ, 1826

Փիլ. նխ. – Փիլոնի Երբայցույ ԱԲ Յաղագս նախախնամութեան, Գ Յաղագս բան ունել անասուն կենդանեաց, աշխատասիրութեամբ՝ Մ. Աւգերեանց, Վենետիկ, 1822

Փիլ. տես., այլաբ., իմաստ., բազն., ժբան – Փիլոնի Հերբայցույ ճառք որոց հելլէն բնագիրք հասին առ մեզ, Վենետիկ, 1892

Abr. – Philonis Alexandrini opera quae supersunt, vol. 4, Berlin, 1962, pp. 1-60: *De Abrahamo*, ed. L. Cohn

Cont. – Philonis Alexandrini opera quae supersunt, vol. 6, Berlin, 1962, pp. 46-71: *De vita contemplativa*, ed. L. Cohn

Decal. – Philonis Alexandrini opera quae supersunt, vol. 4, Berlin, 1962, pp. 269-307: *De decalogo*, ed. L. Cohn

Spec. – Philonis Alexandrini opera quae supersunt, vol. 5, Berlin, 1962, pp. 1-265: *De specialibus legibus*, ed. L. Cohn

LA – Philonis Alexandrini opera quae supersunt, vol. 1, Berlin, 1962, pp. 61-169: *Legum allegoriae libri I-III*, ed. L. Cohn

Leg. – Platonis opera, vol. 5: *Leges*, ed. J. Burnet, Oxford, 1967

Tim. – Platonis opera, vol. 4: *Timaeus*, ed. J. Burnet, Oxford, 1968

36-2007



34 Yovhannēs Erznkac‘i, *On the Movements of the Celestial Bodies*, pp. 80-81.